

ք. Երևան

13.02.2023թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.1/1757-2023, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.3/864-2023, ՀՀ էկոնոմիկայի 03/1669-2023 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.1/1052-2023 և Կադաստրի կոմիտեի ԱԳ/1305-2023 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն **ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Բյուրեղավան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.16 հա այլ հողատեսք (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0315-0003) փոխադրել հատուկ պահպանվող տարածքների հողեր նպատակային նշանակության՝ պատմական և մշակութային հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ. Տերտերյան

քարտուղար՝

Լ. Մկրտչյան